ՍՐՏԻ ԿՈՐՈՆԱՐ ԱՆՈԹՆԵՐԻ ՍՏԵՆՏԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԳՀԱՊՁԲ-2020/16-1-ԵՊԲՀ-9»

ք.Երևան «23» «հունվարի» 2020թ.

«Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամը ի դեմս ռեկտոր Արմեն Աբգարի Մուրադյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Պրոֆտեստ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա.Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 63.705.000,00 /վաթսուներեք միլիոն յոթ հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը ապրանքների մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2031]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը,

---

Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 33 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե

պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[242]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ	«Պրոֆտեստ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2	Հասցե՝ ք.Երևան, Արաբկիր 41, 12/3
Հեռախոսահամար՝ 060 621 000	Հեռախոսահամար՝ 095 59 58 58
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ	Բանկ՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 11500166513800	Հ/հ՝ 220290123490000
ՀՎՀՀ՝ 01503448	ՀՎՀՀ՝ 00120301
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան	էլ. հասցեն՝ ProftestLLC@gmail.com
	Տնօրեն՝ Ա.Մարտիրոսյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

[2] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
« 23 » « 01 » 2020թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2020/16-1-ԵՊԲՀ-9» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	33141211	Դեղապատ ստենտ/1	Xience Pro, Abborr Vascular	Պետական պատվերով ստենտավորման ծառայությունների մատուցման նպատակով ձեռք բերվող դեղապատ ստենտ: Ստենտի նյութը և կառուցվածքը՝ լազերով կտրված կոբալտ-քրոմի համաձուլվացքից կազմված գլան, ստենտի ծածկը՝ Էվերոլիմուս դեղանյութ արտազատող ծածկ: Ստենտի կառուցվածքը՝ 2.25-3.0 մմ տրամագծով ստենտն ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5-4.0 մմ-ոց ստենտն ունի երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձևավորված է սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Ստենտի պատերի հաստությունը՝ 0.0032”: Ստենտի	հատ	124.000,00	9.300.000,00	75	ք.Երևան Աբովյան 60	75	

				երկայնաձիգ ճկունությունը՝ գերազանց: Ստենտը ոչ ֆեռոմագնիսական է և ունի բարձր ճառագայթային ուժ: Մետաղական մակերեսի ընդարձակումը կատարվում է 13.3%-ի սահմաններում 3.0 մմ տրամագծի դեպքում, 12.8%-ի սահմաններում 4.0 մմ տրամագծի դեպքում: Լայնացումից առաջացած կարճացումը՝ 0% 3.0 x 18 մմ ստենտի համար: Անկախ լայնացման աստիճանից չի գերազանցում ստենտի երկարության 5%-ը: Հետագա տեղաշարժման հավանականությունը՝ 4.4%, 3.0 x 18 մմ ստենտի համար: Ստենտի բացման նոմինալ ճնշումը՝ 11 atm, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm (բոլոր տրամագծերի ստենտերի համար): Անցման պրոֆիլը՝ 0.0425" (3.0 x 18), ծայրի մուտքի պրոֆիլը՝ 0.017": Բալոնի միջին չափսը 0.041" կամ 1.04 մմ՝ 3.0x18 մմ ստենտի համար: Բալոնը բարակ երկակի շերտով, նյութը՝ բազմաշերտ պեբաքս: Ուղղորդիչ կաթետերի ներքին նվազագույն տրամագիծը՝ 0.056" կամ 1.4 մմ (բոլոր չափսի ստենտերի համար): Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային և ֆլյուրո պոլիմերներից, որոնք օգտագործվում են են անոթային կարի համար նախատեսված թելերի							

				արտադրությունում: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին՝ 88 μg/cm²: Ստենտի աշխատանքային երկարությունը՝ 145սմ: Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ: Բացված ստենտի մաքսիմալ տրամագիծը՝ 2.0-2.5-ը մինչև 3.25 մմ, 2.75-3.0-ը մինչև 3.75 մմ, 3.5-4.0-ը մինչև 4.5 մմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից ստենտի պահանջվող չաափերն են ըստ երկարության՝ 8, 12, 15, 18, 23, 28 մմ (2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում), 8, 12, 15, 18, 23, 28, 33, 38 մմ (2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում): Ֆորմատ՝ հատ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականի առկայություն: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70%							

				առկայություն: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:							
17	33141137	Դիլատացիոն կաթետեր՝ չընդլայնվող գնդանոթով/2	NC Trek, Abborr Vascular	Պետական պատվերով ստենտավորման ծառայությունների մատուցման նպատակով ձեռք բերվող բալոնային կաթետր NC տիպի (չընդլայնվող գնդանոթով), 0,014", կաթետրի երկարությունը՝ 142-143 սմ: Բալոնի նյութը՝ Պեբակս: Կրկնակի հիդրոֆիլային ծածկույթի առկայություն: Բալոնի կրկնակի շերտ՝ 3,5-5,0մմ չափսերի համար: Բալոնի նոմինալ բացման ճնշումը՝ 12 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,018" (0.45), ծայրի երկարությունը՝ 3,74 մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,2/2,5F: Շաֆթի մեջ ինտեգրված վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ նվազագույնը 1,1 մմ երկարությամբ: Կախված վիրահատվող անոթի տրամագծից բալոնի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ: Կախված	հատ	33.000,00	1.650.000,00	50	ք.Երևան Աբովյան 60	50	

				վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից բալոնի պահանջվող չաափերն են ըստ երկարության՝ 6մմ (առնվազն 1.5-4.0 տրամագծերի դեպքում), 8մմ (առկա բոլոր տրամագծերի դեպքում), 12մմ (առկա բոլոր տրամագծերի դեպքում), 15 (առկա բոլոր տրամագծերի դեպքում), 20մմ (առկա բոլոր տրամագծերի դեպքում), 25 մմ (առնվազն 3.0 և 3.5 տրամագծերի դեպքում): Ֆորմատ՝ հատ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականի առկայություն: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70% առկայություն: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:							
18	33141137	Դիլատացիոն կաթետեր՝	RX Trek, Abborr	Պետական պատվերով ստենտավորման	հատ	31.500,00	2.520.000,00	80	ք.Երևան Աբովյան	80	

		ընդլայնվող գնդանոթով/1	Vascular	ծառայությունների մատուցման նպատակով ձեռք բերվող բալոնային կաթետր RX տիպի, 0,014", կաթետրի երկարությունը՝ 145 սմ: Բալոնի նյութը՝ Պեբակս: Արտաքին հատվածում կրկնակի հիդրոֆիլային ծածկույթ և հիդրոֆոբային ծածկույթ՝ կաթետրի հատվածում: Բալոնի կրկնակի շերտի հաստությունը՝0,0014" (0.036 մմ) 2,25-5,0մմ չափսերի համար: Բալոնի նոմինալ բացման ճնշումը՝ առավելագույնը 8 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 14 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,017" (0.43), ծայրի երկարությունը՝ 3մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,1/2,4F: Շաֆթի մեջ ինտեգրված վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ նվազագույնը 1,0 մմ երկարությամբ: Կախված վիրահատվող անոթի տրամագծից բալոնի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 1.2, 1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից բալոնի պահանջվող չաափերն են ըստ երկարության՝ 6մմ (առնվազն 1.2-4.0 տրամագծերի դեպքում), 8մմ (առնվազն 1.2-4.0					60		

				տրամագծերի դեպքում), 12մմ (առկա բոլոր տրամագծերի դեպքում), 15մմ (առկա բոլոր տրամագծերի դեպքում), 20մմ (առնվազն 1.2-4.0 տրամագծերի դեպքում), 25մմ (առնվազն 2.0-4.0 տրամագծերի դեպքում), 30 մմ (առնվազն 2.0-4.0 տրամագծերի դեպքում): Ֆորմատ՝ հատ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականի առկայություն: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70% առկայություն: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:							
21	33141211	Կորոնար ուղղորդիչ/1	HI Torque, Abbott	Պետական պատվերով ստենտավորման ծառայությունների մատուցման նպատակով ձեռք բերվող կորոնար ուղղորդիչ: Կորոնար	հատ	29.000,00	290.000,00	10	ք.Երևան Աբովյան 60	10	

				ուղղորդիչ 0,014" : Ներքին միջուկը կազմված է 304V տեսակի պողպատից, հյուսված ծայրով: Ռենտգենկոնտրաստ ծայրի երկարությունը՝ 3սմ: Դիստալ մասը և ծայրի շապիկը պատված է պոլիմերային ծածկույթով: Հիդրոֆիլ ծածկույթ պոլիմեր ծածկույթի վրայից: Կախված վիրահատվող անոթի անատոմիական առանձնահատկությունների ց դիստալ ռենտգենկոնտրաստ ծայրի պահանջվող ձևերն են՝ ուղիղ, J-ձև: Կախված վիրահատվող անոթի անատոմիական առանձնահատկությունների ց ծայրի պահանջվող կոշտություններն են՝ 1,5գ, 2,7գ, 4,1գ: Կախված վիրահատվող անոթի անատոմիական առանձնահատկությունների ց կորոնար ուղղորդիչի պահանջվող երկարություններն են՝ 190սմ, 300 սմ: Ֆորմատ՝ հատ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականի առկայություն: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները							

				և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70% առկայություն: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:							
24	33141211	Դեղապատ ստենտ/4	Xience Pro, Abbott Vascular	Ստենտի նյութը և կառուցվածքը՝ լազերով կտրված կոբալտ-քրոմի համաձուլվացքից կազմված գլան, ստենտի ծածկը՝ Էվերոլիմուս դեղանյութ արտազատող ծածկ: Ստենտի կառուցվածքը՝ 2.25-3.0 մմ տրամագծով ստենտն ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5-4.0 մմ-ոց ստենտն ունի երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձևավորված է սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Ստենտի պատերի հաստությունը՝ 0.0032": Ստենտի երկայնաձիգ ճկունությունը՝ գերազանց: Ստենտը ոչ ֆեռոմագնիսական է և ունի բարձր ճառագայթային ուժ: Մետաղական մակերեսի ընդարձակումը կատարվում	հատ	124.000,00	24.800.000,00	200	ք.Երևան Աբովյան 60	200	

				է 13.3%-ի սահմաններում 3.0 մմ տրամագծի դեպքում, 12.8%-ի սահմաններում 4.0 մմ տրամագծի դեպքում: Լայնացումից առաջացած կարճացումը՝ 0% 3.0 x 18 մմ ստենտի համար: Անկախ լայնացման աստիճանից չի գերազանցում ստենտի երկարության 5%-ը: Հետագա տեղաշարժման հավանականությունը՝ 4.4%, 3.0 x 18 մմ ստենտի համար: Ստենտի բացման նոմինալ ճնշումը՝ 11 atm, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm (բոլոր տրամագծերի ստենտերի համար): Անցման պրոֆիլը՝ 0.0425" (3.0 x 18), ծայրի մուտքի պրոֆիլը՝ 0.017": Բալոնի միջին չափսը 0.041" կամ 1.04 մմ՝ 3.0x18 մմ ստենտի համար: Բալոնը բարակ երկակի շերտով, նյութը՝ բազմաշերտ պերաքս: Ուղղորդիչ կաթետերի ներքին նվազագույն տրամագիծը՝ 0.056" կամ 1.4 մմ (բոլոր չափսի ստենտերի համար): Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային և ֆլյուրո պոլիմերներից, որոնք օգտագործվում են են անոթային կարի համար նախատեսված թելերի արտադրությունում: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին՝ 88 μg/cm^2: Ստենտի աշխատանքային երկարությունը՝ 145սմ:							

				Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ: Բացված ստենտի մաքսիմալ տրամագիծը՝ 2.0-2.5-ը մինչև 3.25 մմ, 2.75-3.0-ը մինչև 3.75 մմ, 3.5-4.0-ը մինչև 4.5 մմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից ստենտի պահանջվող չաափերն են ըստ երկարության՝ 8, 12, 15, 18, 23, 28 մմ (2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում), 8, 12, 15, 18, 23, 28, 33, 38 մմ (2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում): Ֆորմատ՝ հատ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականի առկայություն: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70% առկայություն: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է							

				ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:							
27	33141211	Դեղապատ ստենտ/7	Xience Xpedition 48	Ստենտի նյութը՝ կոբալտի-քրոմի համաձուլվածք, ստենտի ծածկը՝ էվերոլիմուս արտազատող ծածկ: Ստենտի կառուցվածքը լազերով կտրված կոբալտ-քրոմային գլան: 2.5-3.0 մմ տրամագծով ստենտն ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5 մմ-ոց ստենտը պետք ունենա երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձևավորված է սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Ստենտի պատերի հաստությունը՝ 0.0032": Ստենտի երկայնաձիգ ճկունությունը գերազանց: Ստենտը ոչ ֆեռոմագնիսական է և ունի բարձր ճառագայթային ուժ: Մետաղական մակերեսի ընդարձակում՝ 13.3%-ի սահմաններում 3.0 մմ տրամագծի դեպքում: Անկախ լայնացման աստիճանից չի գերազանցում ստենտի երկարության 5%-ը: Բալոնի ճնշման ցուցանիշները՝ 8 մթն 2.5- 2.75 մմ տրամագծի ստենտերի համար, 10 մթն 3.0-3.5 մմ տրամագծի ստենտերի համար: Ստենտի բացման նոմինալ ճնշումը՝ 11	հատ	250.000,00	16.250.000,00	65	ք.Երևան Աբովյան 60	65	

				atm, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm (բոլոր տրամագծի ստենտերի համար): Բալոնի նյութը բազմաշերտ պեբաքս: Ուղղորդիչ կաթետերի ներքին նվազագույն տրամագիծը մինչև 0.056” կամ 1.4 մմ (բոլոր չափսի ստենտերի համար): Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային և ֆլուորո պոլիմերներից, որոնք օգտագործվում են են անոթային կարի համար նախատեսված թելերի արտադրությունում: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին՝ 100 մկգ/սմ^2: Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2.5, 2.75, 3.0, 3.5 մմ: Ստենտի երկարությունը՝ 48 մմ: Ֆորմատ՝ հատ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականի առկայություն: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70%							

				առկայություն: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:							
39	33141211	Կորոնար ուղղորդիչ/2	HI Torque, Abbott	Կորոնար ուղղորդիչ 0,014": Ներքին միջուկը կազմված է 304V տեսակի պողպատից, հյուսված ծայրով: Ռենտգենկոնտրաստ ծայրի երկարությունը՝ 3սմ: Դիստալ մասը և ծայրի շապիկը պատված է պոլիմերային ծածկույթով: Հիդրոֆիլ ծածկույթ պոլիմեր ծածկույթի վրայից: Կախված վիրահատվող անոթի անատոմիական առանձնահատկությունների ց դիստալ ռենտգենկոնտրաստ ծայրի պահանջվող ձևերն են՝ ուղիղ, J-ձև: Կախված վիրահատվող անոթի անատոմիական առանձնահատկությունների ց ծայրի պահանջվող կոշտություններն են՝ 1,5գ, 2,7գ, 4,1գ: Կախված վիրահատվող անոթի անատոմիական առանձնահատկությունների ց կորոնար ուղղորդիչի պահանջվող երկարություններն են՝ 190սմ, 300 սմ: Ֆորմատ՝ հատ: Ցանկացած մատակարարված	հատ	29.000,00	870.000,00	30	ք.Երևան Աբովյան 60	30	

				խմբաքանակի համար CE MARK որակի վկայականի առկայություն: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70% առկայություն: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:							
49	33141137	Դիլատացիոն կաթետեր՝ չընդլայնվող գնդանոթով/4	NC Trek, Abborr Vascular	Բալոնային կաթետր NC տիպի (չընդլայնվող գնդանոթով), 0,014", կաթետրի երկարությունը՝ 142-143 սմ: Բալոնի նյութը՝ Պերակս: Կրկնակի հիդրոֆիլային ծածկույթի առկայություն: Բալոնի կրկնակի շերտ՝ 3,5-5,0մմ չափսերի համար: Բալոնի նոմինալ բացման ճնշումը՝ 12 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,018" (0.45), ծայրի երկարությունը՝ 3,74 մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,2/2,5F: Շաֆթի մեջ ինտեգրված	հատ	33.000,00	3.300.000,00	100	ք.Երևան Աբովյան 60	100	

				վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ նվազագույնը 1,1 մմ երկարությամբ: Կախված վիրահատվող անոթի տրամագծից բալոնի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից բալոնի պահանջվող չաափերն են ըստ երկարության՝ 6մմ (առնվազն 1.5-4.0 տրամագծերի դեպքում), 8մմ (առկա բոլոր տրամագծերի դեպքում), 12մմ (առկա բոլոր տրամագծերի դեպքում), 15 (առկա բոլոր տրամագծերի դեպքում), 20մմ (առկա բոլոր տրամագծերի դեպքում), 25 մմ (առնվազն 3.0 և 3.5 տրամագծերի դեպքում): Ֆորմատ՝ հատ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականի առկայություն: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70% առկայություն:							

				Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:							
51	33141137	Դիլատացիոն կաթետեր՝ ընդլայնվող գնդանոթով /4	RX Trek, Abborr Vascular	Բալոնային կաթետր RX տիպի, 0,014", կաթետրի երկարությունը՝ 145 սմ: Բալոնի նյութը՝ Պեբակս: Արտաքին հատվածում կրկնակի հիդրոֆիլային ծածկույթ և հիդրոֆոբային ծածկույթ՝ կաթետրի հատվածում: Բալոնի կրկնակի շերտի հաստությունը՝0,0014" (0.036 մմ) 2,25-5,0մմ չափսերի համար: Բալոնի նոմինալ բացման ճնշումը՝ առավելագույնը 8 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 14 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,017" (0.43), ծայրի երկարությունը՝ 3մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,1/2,4F: Շաֆթի մեջ ինտեգրված վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ նվազագույնը 1,0 մմ երկարությամբ: Կախված վիրահատվող անոթի տրամագծից բալոնի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 1.2, 1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի	հատ	31.500,00	4.725.000,00	150	ք.Երևան Աբովյան 60	150	

				չափից բալոնի պահանջվող չաափերն են ըստ երկարության՝ 6մմ (առնվազն 1.2-4.0 տրամագծերի դեպքում), 8մմ (առնվազն 1.2-4.0 տրամագծերի դեպքում), 12մմ (առկա բոլոր տրամագծերի դեպքում), 15մմ (առկա բոլոր տրամագծերի դեպքում), 20մմ (առնվազն 1.2-4.0 տրամագծերի դեպքում), 25մմ (առնվազն 2.0-4.0 տրամագծերի դեպքում), 30 մմ (առնվազն 2.0-4.0 տրամագծերի դեպքում): Ֆորմատ՝ հատ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականի առկայություն: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70% առկայություն: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:							

ԸՆԴԱՄԵՆԸ					**63.705.000,00**				

** Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:*

*** 2020 թվականին, միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի պահանջի, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության դրույթները:*

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2
Հեռախոսահամար՝ 060 621 000
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 11500166513800
ՀՎՀՀ՝ 01503448
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Պրոֆտեստ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Արաբկիր 41, 12/3
Հեռախոսահամար՝ 095 59 58 58
Բանկ՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 220290123490000
ՀՎՀՀ՝ 00120301
Էլ. հասցեն՝ ProftestLLC@gmail.com
Տնօրեն՝ Ա.Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » « » 2019թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2020/16-1-ԵՊԲՀ-9» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** Հրավերում գումարները նշվում են տոկոսով՝ ըստ մատակարարված ապրանքների քանակի:*

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » « » 2019թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2020/16-1-ԵՊԲՀ-9» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրությունն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » « » 2019թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2020/16-1-ԵՊԲՀ-9» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՊՐՈՖՏԵՍՏ ՍՊԱՌՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ «ПРОФТЕСТ»
LIMITED LIABILITY COMPANY "PROFTEST"
ՀՀ ԵՐԵՎԱՆ * РА ЕРЕВАН * RA YEREVAN
"ПРОФТЕСТ"
"PROFTEST"
00120301